

և 2) Մ. Աբեղեանի «Հայ ժողովրդական առասպելներ» աշխատութիւնները. առաջինը 300 ա., երկրորդը 200 ա.:

— Պօլսի պատրիարքարանի նորերս հրատարակած դպրոցական վիճակացոյցից երևում է, որ առ 1 յունուարի 1908 թիւ Պօլսի բոլոր թաղերում Հայոց վարժարան—դպրոցների թիւը եղել է 42, որտեղ սովորում են 5379 հոգի, որոնցից աշակերտ 2924 և աշակերտուհի 2450: Բոլոր դպրոցներում դասաւանդել են 294 հոգի, որոնցից 168 ուսուցիչներ և 126 վարժուհիք: Գրպրոցները պահուում են եկեղեցիների անդուհիների օժանդակութեամբ (50454 զր.), աշակերտների թօշակադրամով (31557 զր.) և մասնաւոր նուէրներով (2220 զր.), որով ամսական ծախք բոլոր դպրոցների վրայ գնում է 84231 զր.:

Բացի այս դպրոցներից Պօլսում հայ մանուկներ յաճախում են և պետական ու այլ դպրոցներ, մօտաւորապէս 1500 հոգու չափ:

Գպրոցները զանազան տիպի ու դասընթացքի են:

Մ Ա Մ Ո Ւ Լ

«Հասկեր», Թիֆլիս, 1908 թ. № 1 և 2. վերջերս մեզանում միակ կանոնաւոր հրատակուող մանկական ամսաթերթն է այս և արդէն յաջողութեամբ թեւակոխել է Գ.—րդ տարին: Երկու համարներն էլ ճօխ են բովանդակութեամբ, պատկերազարդ և հայ մանկան մատչելի թերթին աշխատակցում են մեր յայտնի գրողները՝ Յով. Թումանեան, Աւ. Ահարոնեան, Աւ. Իսահակեան և այլն: Սիրուն են առաջնի կենսունակ, ճօխ ժողովրդաբարբառով ոտանաւոր առակներ—հէքեաթները («Չարի վերջը», «Խօսող ձուկը»), երկրորդի գողտրիկ պատկերը աշակերտական կեանքից («Գունատ տղան»), երրորդի սիրուն այլաբանական զրոյցը («Արևի մօտ»):

«Հասկերն» ունի նաև «մանկավարժական գրադարան», որով խմբագրութիւնը առանձին գրքոյկներով տալիս է իւր ընթերցողներին ընտիր երկերի թարգմանու

թիւններս—Հրատարակութիւնը խնամքով է, տիպը մաքուր, թուղթը լաւ:—

«Աղբիւր», Թիֆլիս, 1908 թ. № 1 և 2: Այս տարուանից, ինչպէս երևում է, Պ. Տ. Նազարեանը մտադիր է կանոնաւորապէս շարունակելու «Աղբիւր»-ի հրատարակութիւնը: Թէ № 1 և թէ № 2 ծաւալը մեծացրած, ընտիր թղթի վրայ և շքեղօրէն է հրատարակած, ճիշտ բովանդակութեամբ և սիրուն պատկերներով:—Ամբողջ 25 տարի հայ մասաղ սերնդի համար ուսման աղբիւր է եղել այս ամսաթերթը, չունենալով միևնոյն ժամանակ իւր մրցակիցը. և այժմ էլ նա պահում է իւր գիւրքը պատուաւոր, միայն ամսոս, որ հայ հատարակութիւնը սառնասիրտ է գէպի «Աղբիւրը», դուրէ մասամբ նորա համար, որ վերջին տարիները նա շափազանց անկանոն էր հրատարակում:—

Հայ հասարակութեան առանձնապէս յանձնարարում ենք իրանց զաւակների գրասեղանից անպակաս անել «Հասկերն»-ն ու «Աղբիւր»-ը: Մայր սարերի կարկաչահոս աղբիւրն ու մայր դաշտերի լեցուն հասկերը թող հայ մանկան ծարաւն ու միտքը յարատե յագեցնեն: Անպայման անհրաժեշտ է ապահովել գոցա գոյութիւնը:—

«Յուսարար», Թիֆլիս, 1908 թ. № 1 Մարտ «Թատարոն» հանդիսի դադարումից յետոյ մեր գրականութեան մէջ զուտ բեմարուեստին—Թատրոնին նուիրուած մի թերթի հրատարակութեան անհրաժեշտութիւն էր. և այդ պակասը եկաւ լրացնելու «Յուսարար»-ը, որ յաջողութեամբ բողոքեց իւր առաջի տարին: Հրատարակութիւնը պատկերազարդ է և բացի այն, որ տալիս է յատկապէս դաւառական բեմերի համար յարմարաւոր պիէսների հայերէն թարգմանութիւններ, իբրև յաւելուած, անփոփում է ընթացիկ մեր թատրոնական կեանքը և ուսումնասիրութիւններ անում մեր բեմի անցեալից և ներկայից. բեմարուեստն ու գեղարուեստը միացրած իրար: Ա. Մանգինեա-

նի շահագրգիռ «Յիշողութիւնների», 1էօ-ի ուշագրաւ կենսագրականի հետ դուք այդ երկշաքաթաթերթում կգանէք նաև Յովհ. Թումանեանի, Շ. Կուրղինեանի, Աստ. Մարիկի ոտանաւորներն ու այլ լուրջ յօդուածներ:—

Հայ հասարակութիւնը պէտքէ աջակցէ իւր միակ բեմաթերթին:

Ա. Մ.

Հիւանդներ կան, որոնք այս կամ այն գոյնը չեն տեսնում: Այդ յայտնի է ամէնքին. բայց հիւանդներ ևս կան, ինչպէս երևում է, որոնք չեղած, գոյութիւն չունեցող բաներն են տեսնում: Թէ առաջին և թէ վերջին տեսակի հիւանդներից են «Մշակ»-ի ղեկավարներից ոմանք մեր վերաբերութեամբ: Անցեալ Սեպտ. «Արարատ»-ի մէջ տպուած էր Կամանուէլ քահանայ Նաղարեանի մի գրախօսութիւնը Սուքիաս եպիսկոպոս Պարզեանցի նամակի առթիւ, որ ուղղուած է եղել Երեմիա եպիսկոպոսին: Գրախօսականը համեմատութեան և անաչառութեան սահմանների մէջ մի քննութիւն էր այդ երկի պատմական արժէքի մասին: Նա դատապարտել էր իւր գրախօսականի մէջ քահանաների ձեռնադրութեան խնդրում ոչ միայն Երեմիա եպիսկոպոսին, որ ամբարազդաբար թոյլ է տուել իրեն, գրքի մէջ բերուած դոկումենտների համաձայն, կաշառքներ պահանջել, այլ և գրքի հեղինակ Սուքիաս եպիսկոպոսին ուրիշ կողմից: Կամ. քահանայի բերած ցիտատները Սուքիաս եպիսկոպոսի գրքից, առիթ էր տուել «Մշակ»-ին լուտանքներ թափել աստուածաբանների գլխին, որոնց անիրաւ տեղը հալածելն ու հայհոյելը միշտ հաճոյք է պատճառել նրան: Ինչպէ՞ս են նրանք համարձակուել մի գրքի մասին գրախօսական տպելու, ուր Երեմիա եպիսկոպոսի մասին աննպաստ փաստեր կան: Ամբագրութիւնս հարկաւոր պատասխանը գրել և շարել էր տուել, երբ վախճանուեց Ս. Հայրապետը և այդ առթիւ Ս. Էջմածին եկաւ «Մշակ»-ի խմբագիրներից մէկը՝ պ. Հ. Առաքելեան: Երկուստեք եղած բացատրութեան ժամանակ պարզուեց, որ այդ մի թիւրիմացութիւն է եղել «Մշակ»-ի կողմից. մենք բաւականացած դորանով, այլ ևս չտպեցինք մեր պատասխանը: Բայց ահա դարձեալ առանց պատճառի նոյն միտումաւոր թիւրիմացութիւնը: «Արարատ»-ի անցեալ համարում եր. 352. պարզել էինք «Մեր Չայն»-ի մի սխալ նկատողութիւնը մեր հասցէին, չափերանների մէջ բերելով «Մեր Չայն»-ի խօսքերը, որի մէջ յիշուած է Երեմիա եպիսկոպոսի անունը: Այս հանդամանքն ար-

գէն բաւական է եղել, որ «Մամուլ» բաժնի խմբագիրը (Մշակ № 81) նորից իւր երևակայութեան զօր տայ: «Մշակ»-ի կարծիքով «Երեմիա եպիսկոպոսի յիշատակը» մեզ հանդատութիւն չի տալիս: Բայց այդ նորա այն զրպարտութիւններէց մէկն է, որ նա տասնեակ տարիներ շարունակ գործ է դրել «աստուածաբաններին» հայհոյելու առիթ գտնելու և իւր «ազատամտութիւնը» հռչակելու համար: Այժմ էլ հարկաւոր է այդ՝ դաշնակցականներին աչքում «կղերական» չերևալու համար:

Թող նա մի տող ցոյց տայ մեր գրած, որ ստուեր ձգելու նպատակ ունենար հանդուցեալ Երեմիա կամ Արիստակէս եպիսկոպոսների յիշատակի վերայ: Ձենք ուղում ասել, որ այդ եպիսկոպոսների բոլոր վարմունքների և գործողութիւնների տակ պատրաստ ենք երկու ձեռքով ստորագրել, այլ թէ առիթ չենք ունեցել այդ մասին կարծիք յայանելու: Բայց կարելի է տատասկից խաղող քաղել: Մի ժամանակ էլ նրոնց սիւն համարուած Լէօն էր առանց կարմրելու աստուածաբանների դիւրին փողոցային լուտանքներ թափում տղէտ քահանաների ձեռնադրութեան համար, կարծելով, որ դորանով իւր անալի «կերականօրեայ զրոյցները» համ կստանան: Ի՞նչ մեղաւոր էին աստուածաբանները տղէտ քահանաների ձեռնադրութեան խնդրում: Մի կաթիլ խիղճ ունեցէք՝ եթէ դոնէ մի կաթիլ խիղճ ունենայիք, մեր մամուլը այդքան ընկած չէր լինիլ և դուք ընդունակութիւն կունենայիք իրողութիւններն իրենց իսկական յատկութիւններով և գոյներով տեսնելու:



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՆԵԿՐԱՍՈՎ ԵՒ ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎ:

(Պատկեր անցեալի)

Օգտուելով յայանի բժիշկ Բելոգոլովի յիշողութիւններով, «СЛОВО» թերթը վերաբաղարում է հետաքրքր մի դէպք, որի մէջ դիւսաւոր դործող անձինք եղել են Ն. Ա. Նեկրասով և գրաֆ Լորիս-Մելիքով,

1841 թ. դեկտեմբերին, ծննդեան վաղ առաւօտեան ստունամանիքով, ցրտից թռչկոտալով Նիկոլայակսիլ փողոցով